

Հայկյան նետի ծայրով գրվեց անունը քո,
Մեծ Տիգրանը իր նիզակով գծեց սահման,
Քաջ նախնիքդ դարձրին դրախտ եղեմյան
Ու կոչեցին քեզ Մայր Հայաստան:
Մեր երազանքն էս, նոր ապագան,
Մենք միշտ խրոխտ ենք եղել, դու մեր արեվ:

Քայլիք առաջ, հզոր, անպարտ Հայաստան
Վահագնաձին քո քաջերով առնական.
Մեջքիդ ունես Մասիս ու Արագած
Քեզ հավերժող հույսի սուրբ վկան:
Երկիր Նոյան, դու վեհ էս եվ կաս.
Քեզնից ենք թեվ առնում ու խոյանում վեր:

Իմ սիգապանձ, արեվաշող Հայաստան
Ապրած եվ՝ փառք, եվ՝ տառապանք անհամար
Առաջ գնա, թող անցնեն վատ օրեր,
Վստահ եղիր կգան դեռ լավ օրեր: